

EDN: CQFVUF

Տարիներին կենսափորձը հուշում է, որ անսխալական մարդ չկա: Միայն գործում ենք բոլորս: Բայց չի կարելի միևնույն սխալը կրկնել, քանզի երկրորդ անգամն արդեն սխալ չէ, այլ ընտրություն: Իսկ կյանքը ցույց է տալիս, որ անփորձ խելացին էլ վարժ հիմարից սովորելու բան ունի, քանզի ժամանակն անողոք բան է: Ժամանակը թույլերի համար չէ: Ժամանակի հաղթահարման անունը պայքար է:

Պատմությանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ պետությունները, հղում անելով սեփական երկրի անվտանգության ապահովմանը, անցնում են միջազգային իրավունքի թույլատրելի սահմանները՝ իրականացնելով հատուկ գործողություններ, առևանգումներ, արտադատավարական գործընթացներ առանձին անհատների, այդ թվում՝ այլ պետությունների ղեկավարների նկատմամբ: Վերջին տասնամյակներում այդ անհատների թվին են դասվել Պանամայի նախագահ Մանուել Նորյեգան, Հայիթիի նախագահ Ժան-Բերտրան Աստրիդը, Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնը և Վենեսուելայի նախագահ Նիկոլաս Մադուրոն:

Այս առիթով հիշեցի «համետ» կենսագրության տեր, «Հոլոքոստի լոգիստիկ ճարտարապետ», Գեստապոյի IV-B բաժնի վարիչ, «հրեական հարցի վերջնական լուծման» համար պատասխանատու էր Ադոլֆ Այխմանի առևանգումը և նրա նկատմամբ իրականացված հանրային դատավարությունն Իսրայելի կողմից: նրա խնդիրը հրեաներին սպանելը չէր, այլ Երրորդ ռայխի լեզվով ասած «հրեական հարցի լուծումը»՝ բռնի արտաքսումներ, գույքի բռնագրավում և վերաբնակեցում Գերմանիայից և գրավյալ տարածքներից դուրս: Սակայն «վերաբնակեցման» գործընթացը վերածվեց զանգվածային սպանությունների, քանի որ՝ ա) շատ երկրներ հրաժարվում էին ընդունել հրեական փախստականներին, բ) «Մադագասկարի պլանը» և նմանատիպ այլ նախագծերը դարձան անիրագործելի, գ) պատերազմի տրամաբանության պայմաններում ազգայնական գաղափարախոսությունը վերջնականապես ձուլվեց ռազմական պրակտիկային, դ) հրեաները հայտարարվեցին ոչ միայն «անցանկալի տարր», այլ գոյաբանական թշնամի և սպառնալիք, ե) համակարգի չեզոքության և «արդյունավետության» որոնման պայմաններում, երբ արդեն գոյություն ունեն ճամբարներ, հաշվետվություններ և նորմատիվներ, հաջորդ քայլը որոշվում է ոչ թե բարոյականությամբ, այլ այն հարցով, թե «ինչն է ավելի արդյունավետ»:

Հենց այդ հարցում Այխմանը դարձավ անփոխարինելի: Նա մասնագետ էր մարդկանց հոսքերի, փաստաթղթերի և երթուղիների գործերում: Նա մտածում էր ոչ թե մարդկային կյանքերի, այլ վարչական արդյունավետության նորմերով: Թեև նա Հոլոքոստի գաղափարական հայրերից չէր, սակայն դարձավ այն մարդը, որը սպանությունները վերածեց աղյուսակների, գրաֆիկների և ժամանակացույցերի: Նա չէր կասկածում, ավելորդ հարցեր չէր տալիս, չէր փորձում կանգնեցնել գործընթացը. նա իդեալական կերպով հարմարվեց նոր իրողությանը:

Պատերազմից հետո 1960 թ., Արգենտինայում Ռիկարդո Կլեմենտ անվան տակ ապրած Այխմանին իսրայելական Մոսսադը առևանգեց և հանրային դատավարության արդյունքում 1962 թ. ենթարկեց մահապատժի: Դատավարության ընթացքում Այխմանը ոչինչ չէր հերքում, սակայն հրաժարվում էր ընդունել իր մեղքը և պնդում էր՝ «Ես անձամբ չեմ սպանել», «իմ պետության օրենքների շրջանակում ես կատարել եմ հրամաններ», «Ես ապրել եմ ըստ Կանտի կտրուկ նորմերի»՝ ձևափոխելով այն որպես բարձրագույն իշխանությանը ենթարկում: Ներկաներից Արենդտն ընդգծում էր, որ ինքը սպասում էր տեսնել հրեշի: Սակայն տեսավ միջակ, պարզամիտ մի մարդու, որը խոսում էր կաղապարներով ու վարչարարական բառապաշարով: Նա հակահրեա չէր, սակայն անկարող էր բարոյական երկխոսության: Արենդտը դա բնութագրեց որպես «անմտություն»՝ մտածելու ունակության բացակայություն, խղճի հետ երկխոսությունից հրաժարում: Հենց այսպես ծնվեց «չարիքի սովորականություն» (Banality of Evil) հասկացությունը: Բացահայտվեց, որ չարիքը կարող է լինել ոչ դիվային, ոչ սադիստական և ոչ էլ գիտակցված չարամտության, այլ առօրյա գործունեության արդյունք, երբ սովորական մարդիկ դադարում են մտածել՝ «Ճիշտ է արդյոք սա» հարցը փոխարինելով «Արդյոք սա համապատասխանո՞ւմ է հրամանին» հարցով: Փաստորեն նա չէր մեղադրում Այխմանին, այլ ցույց էր տալիս, թե ինչպես համակարգը կարող է կոտրել բարոյական ուղենիշները: Եվ դա ավելի սարսափելի էր, քան դեռի կերպարը: Մարսափելի էր նաև, որ այն կարող է վարակիչ օրինակ լինել...

Ինչու հանկարծ հիշեցի այդ հայտնի պատմությունը, որովհետև այս օրերին աշխարհում ընթացող իրադարձությունները վկայում են, որ աստիճանաբար սկսել է ձևավորվել նոր աշխարհակարգ: Իսկ համամոլորակային այդ գործընթացներից ոչ մի ժողովուրդ չի կարող անմասն մնալ: Մնում է, որ մենք էլ կարողանանք խելացի լինել, հնի փյառակների տակ չմնալու և նոր կառույցում մեր արժանավոր տեղն ունենալու համար: Վստահ եմ՝ լավագույնս կօգնի պատմության իմացությունն ու նրանից դասեր քաղելու կարողությունը (որին մեր պարագայում հաճախ խիստ կասկածում եմ): Հատկապես անհրաժեշտ է լավ պատկերացնել, թե անգլոսաքսերն այս անգամ ինչ տեղ են նախատեսել հայերի համար և ինչպիսի դեր վստահելի մեր հանդեպ գլխավոր դերակատար հրեաներին: Քանի որ, Շամիրամից սկսած մինչև Հայոց եղեռն, նրանք մեր պատմության անկյունաքարային գրեթե բոլոր կեռամաններում միշտ հայտնվել և խիստ բացասական դերակատարություն են ունեցել: Մեր օրերն էլ բացառություն չեն:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած Թեհրան, Յալթա, Պոտսդամ արարներով և հետագայում զանազան օժանդակ փաստաթղթային ձևակերպումներով հիմնված աշխարհակարգը Սովետ Միության ինքնալուծարման և մի շարք այլ տեղաշարժերի հետևանքով փոփոխվում է: ԱՄՆ-ը, Ռուսաստանը և Չինաստանը նոր Սայքս-Պիկոյով փակ դռների հետևում նոր աշխարհակարգ են վերադասավորում: Այսինքն, ինչպես անցյալում է ռուս-ամերիկյան համաձայնություններով եղել, աշխարհը պիտի վերադասավորվի նորովի, նոր աշխարհ՝ նոր գործարքով: Խոսքն ազդեցության գոտիների նոր բաժանման և յուրաքանչյուր կողմի բաժինների մասին է: Ամերիկյան «Նյու Յորք Թայմս» օրաթերթը գրում է, որ Պուտինը Թրամփին Վենեսուելյան առաջարկել է Ուկրաինայի դիմաց: Ընդ որում, թերթը հստակ նշել է՝ առանց շրջանցումների: Բնականաբար հերթը պիտի հասնի Չինաստանին: Ռուսաստանը պիտի վերցնի Եվրոպայի և Աֆրիկայի կեսը, մինչ Թրամփը պիտի տիրանա Արևելյան Ասիային և Գենյանդիային:

Պուտինը գիտի, որ Ուկրաինական պատերազմի ավարտի բանալիները Թրամփի ձեռքում են: Իսկ գործարար մտածողությամբ առաջնորդվող Թրամփը ցանկացած գործարքում միշտ գին ու շահ է փնտրում և նրա համար իբրև փոխարժեք աշխարհում ամենամեծ նավթի պաշար ունեցող Վենեսուելյան է, որն իր ընդերքով և բնական պաշարներով, իսկական գանձ է: Ռուսների կարծիքով դա կարող էր գոհացնել Թրամփին և պատահական չէր, որ ժամերի ընթացքում Մադուրոյի «ննջասենյակի դռները» բացվեցին, ինքն ու կինը լուռ ձերբակալվեցին և փոխադրվեցին ԱՄՆ: Թեև այս քայլը աշխարհի բազմաթիվ երկրներում դժգոհության առիթ դարձավ, սակայն այն լիովին ըմբռնելի է ռուս-ամերիկյան գործարար տարածքում:

Կարծում ենք, որ այս գործարքը չի ասիմանափակվի միայն Վենեսուելայով: Թրամփի վարչակազմը ամերիկյան գերակայությունն ապահովելու համար հետագայում ևս կձգտի շարունակել վերադասավորել դերակատարումները: Հիշեցնենք նաև վաշինգտոնի համար ամենամեծ վտանգը Մոսկվան չէ, այլ Պեկինը: Ավելին, խոսվել է այն մասին, որ չինացիները Ուկրաինայի դեմ պատերազմում ոչ միայն աջակցել են Ռուսաստանին, այլ Արևմուտքին մաշեցնելու նպատակով իրենք էին շահագրգռված պատերազմի տարածմամբ: Ճիշտ է, սա նաև մաշեցրեց Չինաստանի դաշնակից Մոսկվային, սակայն դա խնդիր չէ, քանի դեռ իրենք շահող կողմ են: Միանգամայն ենթադրելի է նաև, որ ռուսները գիտակցում են, թե Ուկրաինական պատերազմն ավելի մեծ օգուտ է բերել Պեկինին, քան իրենց: Չինացիների և Եվրոպայի հարաբերություններն ավելի խորացան, հետո էլ նրանք օգտվեցին Ռուսաստանի էներգետիկ հարստություններից, որոնք իրենց հասան շատ ցած գներով: Ուստի Ռուսաստան-Չինաստան հարաբերություններն այնքան էլ դաշնակցային չեն, այլ ավելի շատ զգացական հիմքերով փոխադարձ շահի վրա են հիմնված: Ռուսներն անցյալում օգտվեցին Չինաստանի դեմ պայքարում Արևմուտքի զբաղվածությունից և այդ ընթացքում վերակառուցեցին իրենց ուժերը: Այսօր հերթը Պեկինին է՝ իր մեծ վերելքը շարունակելու համար: Շատ քաղաքական գործիչներ են ենթադրում մի նոր մեծ գործարքի կնքումը, որի նպատակը կլինի Չինաստանի զսպումը:

Արդ. եթե Վենեսուելյան Ուկրաինայի գինն է, ապա ո՞րն է Չինաստանի գինը: Ի՞նչ կառաջարկի Ամերիկյան ռուսներին, որ վերջինս խզի դաշինքը Չինաստանի հետ: Իրականում Պուտինը չի ուզում երկրորդական դեր խաղալ և փնտրում է իր տեղը «մեծերի սեղանի շուրջ», ինչպես վարժվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ աշխարհը կիսել էր ԱՄՆ-ի հետ: Ի դեպ, ռուսները խելացի են խաղում: ԽՍՀՄ-ից ժառանգած ազդեցության շատ գոտիներից, որոնցից շատերը ժամանակի ընթացքում անօգուտ էին դարձել, հրաժարվեցին: Օրինակներից մեկը Հայաստանն է, որ նրանք զիջեցին Արևմուտքին և Թուրքիային՝ փոխարենը նոր ազդեցության գոտիներ ձեռք բերեցին Արևմտեան Աֆրիկայում: Նույնը՝ Ռուսաստանը սիրիական ազդեցությունը փոխարինեց Արևելեան Աֆրիկայում լայն ներկայությամբ:

Ռուսաստանը նաև ձգտում է վերադարձնել բալթյան հանրապետությունները, վերականգնել իր ազդեցությունը ՆԱՏՕ-ի անդամ Արևելյան Եվրոպայի ամենահզոր պետություններից մեկի՝

Լեհաստանի վրա և դրանով կազմաքանդել ՆԱՏՕ-ն: Թրամփը կարող է չառարկել, եթե դրա գինը լինի Չինաստանի լիակատար գսպումը: Փոխարենը ԱՄՆ-ն իր ազդեցության գոտի կդարձնի ողջ Լատինական Ամերիկան, իրեն կմիացնի Գրենլանդիան: Այս ամենը խոսում են այն մասին, որ Ամերիկան և Ռուսաստանը շատ բան ունեն իրար առաջարկելու, եթե իսկապես ցանկանան: Հետո էլ որքան էլ Ռուսաստանը հեռանա Արևմուտքից, ի վերջո այն Արևմուտքին ավելի մոտ կմնա, քան Չինաստանին: Արևմտքի ընկալումով Ռուսաստանը դիտարկվում է քրիստոնեական աշխարհի մաս, և ավելի նախընտրելի է, որ ազդեցություն ու տեղ ունենա «իրենց մեջ», քան այդ տեղը զիջի Չինաստանի նման պետությանը, որն Արևմուտքի հետ չի համընկնում ո՛չ կրոնով, ո՛չ մշակույթով, ո՛չ քաղաքակրթությամբ և նույնիսկ՝ արտաքին պատկերով: Ուստի «նոր աշխարհակարգի» ձևավորման գործընթացներում պետք չի անտեսել այս իրողությունները, մենք էլ առավել զգոնություն հանդես բերենք: Քանզի, ինչպես Բարսեղ Կեսարացին է ասել, յուրաքանչյուր մարդ էլ կյանքի «ընթացքի մեջ» է, և յուրաքանչյուրն էլ հետզհետե մոտենում է կյանքի վախճանին, ուստի ճշմարիտ է այն խոսքը, որ մենք ամենքս էլ ճանապարհորդ ենք. հարցն այն է, թե արդյո՞ք այդ ճանապարհին մենք առաքինի գործեր կկատարենք: Մի պարզ ճշմարտություն էլ կա. եթե մի երկրում առաջ քաշես ու առաջնորդ ընտրես մի ուսուցչի, ապա այդ երկրում կոզևորվեն, կաշխուժանան բոլոր ուսուցիչները: Եթե բժշկի առաջնորդ ընտրես, անշուշտ կաշխուժանան բոլոր բժիշկները, զինվորականի՝ զինվորականները, դերասանի՝ դերասանները, գրողի՝ գրողները, բանվորի՝ բանվորները: Ու եթե ինչ որ մի վախկոտի՝ վախկոտները, տականքի, այո՝ տականքները և կկործանեն այդ երկիրը: Մա մի փոքրիկ հուշում է ընտրություններից առաջ, թե ում ընտրել կամ չընտրել: Իսկ որևէ մեկին ընտրելուց առաջ, հարկավոր է մանրակրկիտ ուսումնասիրել նրա ողնուծուծը՝ մանկությունից սկսած, ողջ կյանքի ճանապարհը, նրա ընկերներին ու նրա շրջապատը: Հարկավոր է երկրի առաջնորդ ընտրել խելքով ու սրտով: Հակառակ դեպքում որևէ մեկից դժգոհելու իրավունք ուղղակի չենք ունենա:

Իսկ մենք աշխարհատարած այս իրողություններն ու մեր հոգսերը թողած՝ հայտարարում ենք, որ ով հալածում է հային կործանվում է և ուրախանում ենք, որ Թուրքիան անկումի շեմին է: Մասնագետները շեշտում են, որ մինչ պաշտոնական Անկարան շարունակում է հանդես գալ լավատեսական հայտարարություններով, թե «բարձրացրել են Թուրքիան բոլոր առումներով», իրական թվերը փաստում են լրիվ այլ՝ ճգնաժամային իրականության մասին: 2025-2026 թվականների տնտեսական ցուցանիշները մատնանշում են համակարգային փլուզման վտանգը և տնտեսական «Անդունդը» ներկայացնում են թվերով:

Թուրքիայի տնտեսությունը բախվել է երկակի հարվածի՝ արժույթի գահավիժմանը.

1. Թուրքական լիրայի արժեզրկումը դարձել է քրոնիկ երևույթ: Մեկ տարվա ընթացքում արժույթը կորցրել է իր արժեքի 21.54%-ը, ինչը ուղղակիորեն հարվածում է բնակչության գնողունակությանը:

2. Առևտրային և բյուջետային ճեղքվածք. 2025 թվականի արտաքին առևտրի պակասուրդը հասել է \$92 միլիարդի (անը՝ 11.9%): Միաժամանակ, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 1.8 տրիլիոն լիրա (\$41.6 մլրդ), իսկ 2026-ի կանխատեսումները էլ ավելի մռայլ են՝ 2.71 տրիլիոն լիրա պակասուրդ:

3. Սոցիալական աղետ և հոգեբանական ճնշում: Ասել է թե տնտեսական ցնցումներն արդեն դուրս են եկել ֆինանսական տիրույթից և վերաձվել սոցիալական ճգնաժամի:

4. Բնակչության գրեթե մեկ երրորդը չի կարողանում մարել վարկային քարտերի պարտքերը, իսկ 9%-ը հայտնվել է լիակատար սնանկության եզրին: Մա հանգեցրել է բիզնեսների զանգվածային փակման:

5. Ընկճախտի ռեկորդ. 2025-ին Թուրքիայում սպառվել է 71.5 միլիոն փաթեթ հակադեպրեսանտ, ինչը 60%-ով գերազանցում է 2016-ի ցուցանիշը: Մա վկայում է հանրային հուսահատության և ինքնասպանությունների աճող մակարդակի մասին:

6. Փողոցի ձայնն ընդդեմ պաշտոնական հռետորաբանության. գների անկառավարելի աճը փողոց է դուրս բերել հազարավոր մարդկանց: Գործադուլներն ու հանրահավաքները դարձել են առօրյա, քանի որ աշխատավարձերը չեն հասնում գնաճի չափին:

Ռեջեփ Էրդողանի պնդումը, թե երկիրը «բարձրացել է բոլոր առումներով», հակասում է վիճակագրությանը, որտեղ միակ «բարձրացող» ցուցանիշները դեֆիցիտը (պակասուրդ՝ ծախսերի գերազանցումը եկամուտներից), պարտքերը և դեղահաբերի սպառումն են: Թուրքիան կանգնած է ոչ թե վերելքի, այլ խորը անկման նախաշեմին:

Այս պատկերի պարագայում ակամա հարց է առաջանում. ինչու՞ մեր ազգը, դիմությունն ու ընդդիմությունը տարիներ շարունակ չեն կարողանում իրենց միջից այնպիսի առաջնորդ առաջադրել, որը կարող է ազգային համերաշխության ու միասնության առաքելություն ստանձնել: Եվ դա այն դեպքում, երբ ժողովուրդն այսօր ամենաշատն արժանապատիվ ու անկեղծ առաջնորդության, միասնության ու համերաշխության կարիք ունի: Քանզի այս աննախանձելի, խայտառակ, նվաստ ու

թշվառ վիճակը, որում հայտնվել է հայ ազգը, նաև վառ՝ նվիրյալ, անկեղծ ու անշահախնդիր առաջնորդներ չունենալու պատճառով է, նրա ազգային էլիտայի, ընդդիմադիր առաջնորդների ամոթն է, անպատվությունն է: Գաղտնիք չէ, որ այսօր ժողովրդի մեծ մասը մերժում է իշխանություններին և հիմա ամբողջ խնդիրը նրան արժանապատվորեն և անկեղծորեն չառաջնորդելու մեջ պետք է փնտրել: Չէ որ անհատներն են կերտում պատմություն ու հաղթանակներ, քաջալերում ու ոգևորում ազգին: Նրանց խիզախության, ստեղծագործական մտքի ու տաղանդի արգասիքն ենք վայելում բոլորս: Գաղտնիք չէ նաև, որ մենք, որպես քաղաքական ազգ, այդպես էլ չկայացանք: Այդպես էլ պետությունն ու պետականությունը մեր համար չդարձան գերագույն արժեք, այդպես էլ լուրջ ու պատասխանատվությամբ չվերաբերվեցինք պետականությանն ու քաղաքական գործընթացներին: Հստակ է, որ չունենք մեծամասնության կողմից ընդունելի առաջնորդների այլընտրանքային թեկնածուներ, որովհետև հետխորհրդային տարիներին Հայաստանում, համարելով նրանց ապագային, զանգվածաբար իշխանությունից հեռացրին խորհրդային լավագույն կադրերին և ՀՀԾ-ի միջոցով իշխանության եկավ առավելապես ազգի անփորձ, ցածր ու անորակ մասը: Այդպես էլ չձևավորվեց ազգային էլիտա, արժանավորների փոխարեն գերադասեցինք միջակությունը, սոցիալությունն ու գորշությունը և ազգի իրական ընտրանին հայտնվելով լուսանցքում, իր երկրում գնահատված չլինելով, չկարողանալով դրդևնորել ու իրացնել իր մտավոր ու ստեղծագործական հնարավորությունները, հեռացավ երկրից, ասպարեզը թողնելով փողոցից եկած պատահական և անհայտ անցյալ ունեցող մարդկանց: Այնուհետև նույն կադրային քաղաքականությունը շարունակվեց հաջորդ իշխանությունների օրոք և նորանկախ Հայաստանում պետականաշինության, քաղաքական համակարգի ձևավորման փոխարեն նմանակվեցին դրանք:

2018 թ. ապրիլին էլ անհասկանալիորեն իշխանության բերեցինք ՔՊ անունով նեոՀՀԾ-իզմին, երկիր վստահեցինք և դեռ հանդուրժում ենք այս անփորձ, ապաշնորհ, հիմնականում բանակից խուսափած, երկրի համար որևէ լուրջ ծառայություն չունեցած, անհայտ ծագման ու կենսագրության տեր մարդկանց, որոնցից շատերը չեն տիրապետում անգամ կառավարման պարզագույն գիտելիքներին: Արդյունքում կորցրեցինք տարածքներ, կանգնեցինք ազգային արժեհամակարգի խեղաթյուրման, պետական ինստիտուտների արժեզրկման, պետության կազմաքանդման սպառնալիքի և սոցիալ-տնտեսական ու բարոյահոգեբանական խորը ճգնաժամի առջև: Չգիտես ինչու ասպարեզը թողեցինք փողոցին, որտեղից գալով իշխանության՝ փողոցի ցածրարժեք բարբերն ու մշակույթը տեղափոխեցինք պետական համակարգ: Երիցս ապացուցվեց այն հանրահայտ ճշմարտությունը, որ աղետ է լինում այն երկրներում, որտեղ առաջին դեմքերն առաջինը չեն իրենց հպատակների մեջ: Հույն փիլիսոփա Պլատոնն ասել է. «Նրանք, ովքեր բավական խելացի են, որպեսզի չմտնեն քաղաքականություն, պատժվում են՝ իրենց կառավարում են իրենցից հիմարները»:

Չնայած Ազգային ժողովի՝ որպես առաջնային մանդատ ունեցող պետական ինստիտուտի չափազանց կարևոր դերին, խորհրդարանում արտահերթ ընտրությունների արդյունքում ազգի իրական ընտրանու փոխարեն հայտնվեցին ոչ քիչ պատահական, նույնիսկ աշխատանքային փորձ չունեցող մարդիկ: Իսկ գործադիր մարմիններում պատասխանատու պաշտոնների նշանակումները կրում են կամայական բնույթ և չեն ենթարկվում որևէ օրինաչափության: Սա պարզապես զավեշտ է տաղանդավոր հայ ժողովրդի և հայոց պետության նկատմամբ: Այսինքն, իրավիճակը համապատասխանում է ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա Ժան Ժակ Ռուսսոյի հանճարեղ ձևակերպմանը, որ «Չկա ոչինչ ավելի վտանգավոր, քան երբ իշխանությունը հայտնվում է ապաշնորհ մարդկանց ձեռքերում»: Իսկ հին հույն փիլիսոփա Անտիսֆենը դեռևս Ք.ա. 350 թվականին է ասել, որ «Պետությունները կործանվում են այն դեպքում, երբ լավերին չեն կարողանում տարբերել հիմարներից»:

Մեր նախորդ բոլոր իշխանություններն էլ որպեսզի երբևէ չլքեն իշխանությունը և հավերժ կառավարեն, ամեն ինչ արեցին, որ չկայանան քաղաքական դաշտն ու նրա գլխավոր դերակատար կուսակցությունները: Դրանք ըստ էության այդպես էլ չդարձան քաղաքական մարդու դաստիարակության դպրոցներ և մնացին որպես կարիերայի ակումբներ ու առաջնորդվում են նեղ անձնական և կուսակցական շահերով: Դրանք տարիներ շարունակ քաղաքական դաշտում ակտիվություն են դրսևորում իշխանությունների բարեհաճությամբ, իսկ ընդդիմադիր կուսակցությունները խորհրդարանում հայտնվում էին իշխանությունների «նշանակումով»: Նախընտրական ցուցակներում էլ շատերն ընդգրկվում էին ոչ թե ազգային քաղաքական էլիտայի մաս կազմելով, այլ որոշակի գումարի դիմաց: Այդպես էլ չձևավորվեց հանրային կառավարման գործուն համակարգ և չհավաքագրվեց քաղաքական այնպիսի ընտրանի, որը կտիրապետի մասնագիտական գիտելիքների, օժտված կլինի կառավարչական ընդունակություններով, բարոյական բարձր գաղափարներով, արժեքներով ու սկզբունքներով, որի համար հանրային (պետական) շահն առաջնային է և որը իշխանական լիազորությունները արդյունավետ ձևով կօգտագործի հանրության խնդիրները լուծելու համար: Այս ամենի արդյունքը եղավ այն, որ չանեցին այլընտրանքային քաղաքական անհատակա-

նություններ և այսօր հայտնվել ենք ազգի առաջնորդության լուրջ խնդրի առաջ, որի պատճառով էլ տեղի չի ունենում ազգի համախմբում ու ընդդիմադիր դաշտի միասնություն, այն դեպքում երբ կանգնած ենք ազգային աղետի առաջ: Ազգը պետք է գուրգուրի իր անհատականություններին, հնարավորություն տա դրսևորվելու: Թումանյանն ասում էր. «Անհատներն են կերպարանք տալիս հանրային կյանքին: Իմաստուն ազգերն էլ առատորեն ծախսում են իրենց տաղանդների վրա, լավ իմանալով, որ շատ էժան գնով շատ թանկ բան են ձեռք բերում»: Այն ազգը, որ չի արժևորում իր հերոսներին, նվիրյալներին ու անհատականություններին, չի կարող այդպիսիք ծնել:

Այո, վերջին տարիներին կյանքը խիստ քաղաքականացված է: Աշխարհն էլ խելքը լրիվ թռցրել է: Մարդն ու մարդկային արժեքներն էլ ամենուրեք ոտնատակ են գնում: Էս պայմաններում վտանգվում են բանական մարդուն վայել շատ որակներ և դրանք պակաս կարևոր չեն, քան նոր տանկերն ու տեխնոլոգիաները: Այսօրվա դժնդակ իրականության մեջ որքան դժվար է լավ ընկեր գտնելը, այնքան ավելի դժվար է այդքան դիմակների մեջ ՄԱՐԴ տեսնելը...

Մենք սովորել ենք գեղեցիկ ժպտալ իրար, բայց մոռացել ենք միմյանց զգալ: Իսկական ընկերն այն մեկը չէ, ով քո հաջողության կենացն է բարձրացնում, այլ նա, ով քո ամենաձանր լուրջան մեջ լսում է հոգուդ աղաղակը: Ցավոք, հիմա հավատարմությունը դարձել է շքեղություն, իսկ անկեղծությունը՝ «հնամոդ» սովորություն: Մեկ-մեկ ուզում են ճշալ՝ մի՛ հավատացեք բառերին, մարդիկ, դրանք էժան են: Հավատացեք միայն նրանց, ովքեր ձեր կողքին են, երբ լույսերը հանգչում են ու տոնախմբությունն ավարտվում է... ափսոս, որ նման մարդիկ հիմա «կարմիր գրքում» են: Ուստի նախ հարկավոր է ինքդ քեզ հավատաս ու վստահես, որ հաջողություններ արարես: Ի վերջո հարկավոր է, որ սթափվենք բոլորս, նախընտրական այս թոհուրոհի, Վենսային այցելությունների ու գունագեղ խոտումների արանքում իրատես լինենք, ոչ միայն զգանք, այլ նաև հասկանանք աշխարհաքաղաքական փոփոխություններն ու գոնե մեկ անգամ կարողանանք տեղավորվել սեփական շահերը գիտակցող ժողովուրդների ցուցակում և ինքներս կերտենք մեր վաղվա օրը:

*Сдана / Հանձնվել է՝ 15.02.2026
Рецензирована / Գրախոսվել է՝ 17.02.2026
Принята / Ընդունվել է՝ 19.02.2026*